Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (e-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

30 մայիսի 2023թ.
ք.Երևան ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Նալբանդյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝ Լ.Ղազարյան
Մ. Մարգարյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ. Մելիքսեթյան
Ա. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Կարապետյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ս. Նալբանդյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

2. ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13 ծածկագրով հայտերի բացման մասին
(Ս. Նալբանդյան)

1. Հայտերը բացվել են www.eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդների համակարգի միջոցով: Գնման ընթացակարգի աճուրդը մեկնարկել է 2023 թվականի մայիսի 30-ին ժամը 12.45 և ավարտվել է 2023 թվականի մայիսի 30-ին ժամը 15:13:

2. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ	Ք. Երևան, Քաջազնունի փ. 11/ 23, հեռ. 096 62 89 94, yesargsyan@yahoo.com
2	«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ	ք. Երևան, Աբովյան 29, 3-րդ տարածք, հեռ. +374 10 587534, +374 94 904994, info@itech.am
3	Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ	Հեռ.՝ 077666566, GGEHOLDING@yandex.ru,
4	Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	ք. Երևան, Բաղրամյան 24/2, Հեռ.՝ 010541141, aarutyunov1955@gmail.com
5	Լեմուր Գրուպ ՍՊԸ	Ք.Երևան.Ռ.Լեմկինի 14, llclemurgroup@gmail.com, Հեռ.՝ 041787672

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

3. <u>Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին</u>

(Ս. Նալբանդյան)

«Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ, ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են, իսկ մասնակիցներ Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ հավելված 1.3-կցված չէ /բացակայում է/:

Մասնակիցներ «Ինո-Թեքնոլոջի» ՍՊԸ, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ-ի հրավերով սահմանված հավելված 1-ը ներկայացված չէ հրավերի պահանջներին համապատասխան, իսկ e-AUCTION համակարգում 6-րդ չափաբաժնի մասով լրացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր փաստաթուղթը:

ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ 8-րդ չափաբաժնի մասով ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը նշված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

4. <u>Անհամապատասխանությունները շտկելու մասին</u>

(Ս. Նալբանդյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել Գ.Գ.Է. հոլդինգ ՍՊԸ, ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ին:

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ (eauction.armeps.am) համակարգի միջոցով, մինչև 01.06.2023թ. ժամը 16:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

5. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>

(Ս. Նալբանդյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-23/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (***<u>e-AUCTION</u>***) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2023 թվականի հունիսի 1-ին ժամը 16:00-ին ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

Հանձնաժողովի.

նախագահ՝ Ս. Նալբանդյան

բացող անդամներ՝ Լ.Ղազարյան

Մ. Մարգարյան

գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան

Մ. Մելիքսեթյան

քարտուղար՝ Գ. Կարապետյան